Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
օգոստոսի 21-ի N 1188-Ն որոշման

ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԿՇԵՅԴԵՐԱԿԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ, ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ՉԱՓԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական և հաշվառման աշխատանքների իրականացմանը ներկայացվող պարտադիր պահանջներն են՝

1) անհրաժեշտ և բավարար ճշտություն ապահովող, Կադաստրի կոմիտեի ղեկավարի հրամանով սահմանված կարգով հաշվառված գործիքների և սարքավորումների կիրառումը՝ համաձայն ազգային ստանդարտների, հաստատված նորմերի և կանոնների.

2) աշխատանքների կազմակերպման ընթացակարգերի պահպանումը՝ համաձայն հաստատված նորմերի և կանոնների պահանջների.

3) աշխատանքների ընթացքում անվտանգության տեխնիկական կանոնների պահպանումը՝ համաձայն հաստատված նորմերի, կանոնների և ստանդարտների.

4) միատեսակ պայմանական նշանների և ձևաչափերի կիրառումը՝ հաստատված նորմերի, կանոնների, ստանդարտների պահանջների համաձայն.

5) աշխատանքների իրականացումը տվյալների պաշտպանված և վերահսկելի միջավայրում՝ ապահովելով անձնական տվյալների անվտանգությունը.

6) տվյալների ճշգրտության, ամբողջականության, հստակության և արդիականության ապահովումը.

7) հողամասերի հանութագրման և հատակագծերի կազմման աշխատանքների իրականացումը Կադաստրի կոմիտեից օրենքով սահմանված կարգով ձեռք բերված ելակետային տվյալների (գեոդեզիական ցանցի կետեր, կադաստրային քարտեզից հատված և այլն) հիման վրա.

8) ելակետային նյութերի ճշտության գնահատումը.

9) աշխատանքներն իրականացնելիս տարբեր գործոններից առաջացող սխալները հաշվի առնելը.

10) իրենց կողմից կազմված փաստաթղթերում գործող իրավակարգավորումներից բխող լրացուցիչ համաձայնությունների և համաձայնեցումների անհրաժեշտության վերաբերյալ գրառումներ կատարելը.

11) պատվիրատուի պահանջի դեպքում կատարված աշխատանքների և կազմված հատակագծային նյութերի վերաբերյալ մասնագիտական եզրակացության տրամադրումը.

12) պատվիրատուի պահանջի դեպքում կատարված չափագրման փաթեթը և ելակետային նյութերը պատվիրատուին թղթային և թվային (էլեկտրոնային) տարբերակ-ներով տրամադրելը.

13) պատվիրատուի պահանջի դեպքում որակավորման վկայականի բնօրինակը ներկայացնելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

22.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ